


2623

W 1291

№ 5 «ՆՈՐ ՀՈՍԱՆՔԻ» ԳՐԱԴԱՐԱՆ № 5

Մ. ՄԱՆԻԷԼԵԱՆ

Վ Ե Ր Ժ Ո Ւ Հ Ի Ն



891.99

5-27

✓ 12/11

6 NOV 2011

STOS MUL 4 S

№ 5 «ՆՈՐ ՀՈՍԱՆՔԻ» ԳՐԱԴԱՐԱՆ № 5

891.99


5-27

այս

Մ. ՄԱՆԻԿԵԱՆ



ՎԱՐԺՈՒՀԻՆ



ԹԻՖԼԻՑ

Տպարան Ա. Մ. Կերեսիձեի, Գորսուսկի 1.

1913

24 JUN 2013

42063

I

Տգեղ չէր, գեղեցիկ էլ չէր:

Եթէ մի փոքր աւելի գեր լինէր, մի քիչ էլ աւելի կարճահասակ, գուցէ կարելի լինէր գրաւիչ համարել: Բայց դժբաղդաբար ոչ սիրուն էր, ոչ տգեղ, այլ ուղղակի նիհար էր և բարձրահասակ:

Դէմքի վրայ կնճիռներ չէին նկատուում. կաշին կարծես աքցանով ձգել էին, այնպէս որ մի տարօրինակ փայլ էր ստացել և նրան նայելիս մարդ ակամայ երկիւղ էր զգում, որ ահա կաշին կը պայթի և դուրս կը ցցւեն դէմքի ոսկոռները:

Երբեմն այտերի մէջ տեղում երևում էր մի բութիւնոցի մեծութեամբ կարմրութիւն և շուտով էլի անցնում՝ տեղի տալով գունատ սև կաշուն:

Ձեռքի մատները բարակ ու երկայն, ոտները նոյնպէս:

Նա երբ դեռ փոքրիկ աղջիկ էր, ենթադրում էին, որ շատ գեղեցիկ պիտի լինի, բայց տարիներն անցան և չարդարացրեց իր վրայ դրած յոյսերը:

Միմիայն շարժուն մեծ ու կրակոտ աչքերն էին այդ ոսկրացած դէմքի վրայ կեանք յիշեցնողները:

Կարգալու ժամանակ ակնոց էր գործ ածում, իսկ երբ ընթերցումը վերջացնում էր, խնամքով ծալում և կախում տախտակի նման չորացած կրծքին:

Մօտ տասնհինգ տարի է, որ ես ճանաչում եմ նրան: Ե՞րբ է սկսել նա իր ուսուցչական ասպարեզը՝ չգիտեմ: Չգիտեմ նոյնպէս թէ քանի՞ ուսումնարան է փոխել: Բայց ինքը մնացել է նոյնը, ինչոր տասնհինգ տարի առաջ, երբ առաջին անգամ հանդիպեցի նրան:

Քառասունհինգը պէտք է որ անցկացրած լինի, բայց գլխին դեռ ոչ մի ճերմակած մազ չկայ: մի-միայն շատ թափւելուց նոսրացել են, կարճացել, այնպէս որ նա հազիւ է կարողանում մի փոքրիկ, բարակ, մտրակի հաստութեամբ հիւս անել և ամրացնել գլխի ետևի մասումը:

Նա որոշել էր հաստատ կերպով ընդմիշտ նւիրւել իր սանիկներին և երբեք չամուսնանալ: Բայց այդ նիւթը միշտ էլ նրան յուզում էր և բուրլիանոց կարմրութեանը ստիպում էրեւալ դէմքի վրայ: Թէ-կուզ երբ մենակ, ինքն իրան երազում էր...

Նա ամբողջ հոգով նւիրւած էր իր աշակերտուհիներին և կեանքում գւարձութիւն ու վայելք չկար նրա համար:

Այդ օրը նա երկար տատանւում էր, գնալ թէ չէ:

Թէև մի շաբաթից աւելի էր, որ նա տենդոտ կերպով պատրաստութիւններ էր տեսնում և սպասում այդ օրւան:

Վերջապէս երբ հասել էր այդ օրը, երբ նոր կարել տւած զգեստը գերձակունին թողել էր մահճակալի վրայ, որ այնպէս գայթակղեցուցիչ էր, երբ ամեն ինչ պատրաստ էր, մնում էր միայն հագնւել ու

կառք նստել հարսանքատուն գնալու համար՝ նա սկսւել էր տատանւել:

— Գնալ, թէ չէ... Ի՞նչ պէտք է անի նա այն-տեղ:

Երկար նա լուռ նստած էր գլուխը յենած ձեռքերին:

— Պէտք է գնալ, յանկարծ վճռեց նա, արագ վեր կացաւ իր սենեակում գտնուող միակ փափուկ բազկաթոռի վրայից և սկսեց այս ու այն կողմ ընկնել, չիմանալով ինչից սկսել: Մի վայրկեան կանգ առաւ սենեակի մէջտեղում ու նոր գիւտ արածի պէս արագութեամբ մահճակալի տակից հանեց կօշիկները, պատուհանի վրայից, որ ծածկւած էր չիլի վարադոյրով, վերցրեց կօշիկ ներկը և սկսեց փայլեցնել:

Այդ վերջացնելուց յետոյ, նայեց լացարանը և տեսնելով որ ջուր չկայ, կանչեց աղաինին, ջուր պահանջեց, իսկ ինքը կամոգից հանեց թարմ սպիտակեղէն, մետաքսեայ գուլպաները, որոնց վաղուց չէր հագել, նստեց մահճակալի վրայ և սկսեց վրայից թափթփել զգեստները:

Մի քիչ անց՝ սենեակում դողալով՝ մերկ կանգնած էր նա ներս ընկած կրծքով, բարակ, երկար ոտներով ու ձեռներով և արագութեամբ հագնում էր սպիտակեղէնը:

Չգեց մետաքսեայ սև գուլպաները, հագաւ տակի, սպիտակ շրջագգետը, հագաւ կօշիկները, ու երկար ժամանակ անգործածութեան մասնւած կոր-սէտը ձեռն առաւ:

— Հարկաւոր է, հարկաւոր է... մոմտաց նա

ինքն իրան և կարծես տկամայ ստիպած՝ հագաւ և զցեց կորսէտի թեկերը:

Այդ բոպէին աղախինը ջուր բերեց և տեսնելով չափից դուրս անսովոր պատրաստութիւնները, դարձացած հարցրեց.

— Ո՛ւր էք պատրաստուում, օրիորդ:

— Հարսանիք:

— Ո՞վ է ամուսնանում:

— Մօրաքրոջս աղան:

— Հապա ինչո՞ւ էք այդքան ուշ պատրաստուում:

— Ես էլ չգիտեմ, մէկ մտածում էի չգնալ, բայց վախեցայ որ կը նեղանան:

— Իհարկէ գնացէք. ուրախ կը լինի, պարեր, նւագածութիւն...

— Այո, պէտք է գնալ, մի քիչ թարմանալ, այս միօրինակութիւնը մաշեց, կերաւ ինձ:

Նա մօտեցաւ լացարանին և անուշահոտ օձառով, որ յատկապէս գնել էր այդ առթիւ, սկսեց լացել: Աղախինը դատարկ դոյլը ձեռքին հեռացաւ:

Թարմ սրբիչով նա չորացրեց դէմքը ու երկար ժամանակ կիսահագնւած՝ կանգնած հայելու առաջ՝ զանազան ձևերով սանրում էր մազերը և չէր կարողանում որոշել թէ ո՞ր սանրւածքն է աւելի յարմարուում դէմքին:

Վերջապէս որոշեց կողքից սանրել և թափել ձախ աղանջի վրայ, այնպէս որ ձախ աղանջի միմիայն բլթակի ծայրը երևայ, որից և կը կախի մօր օղերը, որ վաղուց է ինչ հանել ու պահել էր սնդուկի

մէջ, անվայել և հակամանկավարժական համարելով մի վարժուհու համար օղեր գործածելը:

Վերջապէս նա սանրւած էր. օղըկոտնով թարմացրեց դէմքը, թեթեւ կերպով պուդրա քսեց, նայեց հայելու մէջ պրոֆիլ, անփաս, երկրորդ հայելու օղնութեամբ դիտեց գլխի ետևի մասը և կարծեմ զո՞հ մնաց ինքը իրանից, որովհետև մի թեթեւ ժպիտ խաղաց նրա դէմքի վրայ: Քանի զնում տրամադրութիւնը կարծես աւելի լաւանում էր. նոր զգեստը հագնելիս նա մինչև անգամ սկսեց կիսաձայն երգել:

Արդէն համարեա պատրաստ էր, մնում էր ետևի կոճակները ամրացնել, փորձեց ինքը, բայց տեսնելով որ դժուար է, կանչեց աղախինին, որը մտնելով և առաջին անգամ տեսնելով նրան այդպէս զուգւած, զարմացած բացականչեց.

— Ի՞նչ լաւ է օրիորդ, ինչ սագում է. ինչո՞ւ միշտ այդպէս չէք հագնուում:

— Օգնիր, Դաշա, ժպտալով ասաց նա՝ մէջքն անելով աղախինին:

Բոլորովին պատրաստ էր. նա մի քանի անգամ պտտեց հայելու առաջ և դարձաւ աղախինին.

— Ի՞նչ ես կարծում, Դաշա, կուրծքս և թևերս շատ չե՞ն բաց:

— Ո՛չ, ո՛չ, օրիորդ, ինչ էք ասում, այժմ՝ շատ բաց են հագնուում:

Գիտեմ, բայց ախրը իմ բանը ուրիշ է, ես վարժուհի եմ, ինձ չի սագիլ. ի՞նչ կ'աւեն. այնտեղ աշակերտուհիներին կը լինեն:

— Դատարկ բան է, օրիորդ, լաւ զգեստը ամեն-

քին էլ կը սազի. թող ես ունենամ այդպիսի զգեստ ու թող ով ինչ ազգում է ասի:

— Բո բանը ուրիշ է, Դաշա, գու գեռ երիտասարդ ես:

— Լաւ, հօ չէ՞ք կաքող սովորական զգեստով հարսանիք գնալ:

— Այո, իհարկէ, համաձայնեց նա ու ժպտաց: Դէ, այժմ մի կառք կանչիր:

— Իսկոյն օրիորդ. ասաց աղախինը ու գուրս վազեց:

Նա ֆնաց մենակ և նորից սկսեց դիտել իրան հայելու մէջ: Ինքը գոհ էր իրանից: Բայց տարօրինակն այն էր, որ այդպէս խնամքով լւացւելուց, սանրելուց և նոր մոխրագոյն զգեստը հագնելուց յետոյ, կարծես նա աւելի անգուրբեկան դարձաւ, քան երբ տանու պարզ զգեստով էր. այն ժամանակ չէր զգացւում աւելի լաւ երևալու ցանկութիւնը, իսկ այժմ կորցրեց և այն նւագագոյն լաւը, որ կար նրա մէջ...

Նա ամբացրեց օդերը, ձգեց ձեռնոցները, փաթաթեց գլուխը սև մետաքսեայ շարով, հագաւ վերարկուն և այդպէս պատրաստ՝ սպասում էր կառքին:

— Կառքը պատրաստ է:

— Դէ, ցտեսութիւն, Դաշա:

— Դիշերը երևի չէ՞ք գալ:

— Հաւանօրէն:

— Ցանկանում եմ ուրախ ժամանակ անցկացնէք:

— Շնորհակալ եմ:

II

Վաղուց նա չէր եղել այդքան բազմամարդ հիւրասիրութիւններում. մի վայրկեան նրա աչքերը միմեցին, բոլորը խառնեց իրար, դահլիճից լսող երաժշտութեան ձայները նրան թւաց թէ ընդհատւեցին, բոլորը լուցին և շունչները բռնած իրան են նայում... Թւաց թէ ականջի օդերը մեծանում են և իրանց ծանրութեամբ գլուխը դէպի ցած են ձգում. հազիւ էր կարողանում ոտքի վրայ կանգնել և ահա՛ կընկնի... Բայց այդ միայն մի բոլակ էր, երբ նա ներս մտաւ լուսաւորւած դահլիճը և տեսաւ այդ գուգւած մարդկանց, իսկոյն սթափւեց, ուժ գործ դնելով բարձրացրեց գլուխը, նայեց շուրջը, բոլորն անծանօթ թւացին. անհամարձակ, երբեուն քայլերով նա դիմեց դէպի սեղանատուն, յուսալով գոնէ այնտեղ ծանօթի հանգիպելու...

Մի քանի քայլ հազիւ էր արել, երբ վազելով մօտեցաւ նրան մօրաքրոջ փոքրիկ աղջիկը՝ ոտից-գլուխ սպիտակ հագնւած, պարից կարմրած այտերով:

— Ինչո՞ւ այսքան ուշացար:

Նա վախեցաւ, մի վայրկեան նրան թւաց թէ առաջին անգամն է տեսնում այդ գլուխը վարդերով զարդարւած աղջկանը, բայց իսկոյն ուշքի գալով գրկեց նրան և համբուրեց:

— Դո՞ւ ես Կատեա, ո՞ւր է մայրիկը:

— Սեղանատանը կը լինի:

— Գնանք ինձ հետ, տա՛ր ինձ նրա մօտ:

Շնորհաւորելով մօրաքրոջը և լսելով նրա յան-

դիմանութիւնները, որ փոխանակ մի այգիսի օր ամբողջ օրը իրանց մօտ լինելու, օտարի նման ժամը 10-ին է գալիս և ներողութիւն խնդրելով, որ իրան լաւ չէր զգում եղել՝ նստեց սեղանի մօտ մի բաժակ թէյ խմելու:

— Դէ պատմիր Կատեա, ուրախ է անցնում, շատ ես պարել:

— Եթէ իմանաս ինչքան ուրախ է, ինչքան եմ պարել:

— Պարիր, զարճացիր, քանի երիտասարդ ես:

— Իսկ դուք չէ՞ք պարելու:

— Ի՞նչ ես ասում:

— Ի՞նչ կայ որ:

— Ո՛չ, ես վաղուց է, որ չեմ պարում:

— Իսկ այսօր կը պարես. մայրիկն էլ պիտի պարի, այ կըստիպենք. ձեզ էլ, ձեզ էլ կըստիպենք... կը պարէք հա՛, ... ֆո՛ւ, էլի յիշեցի, մի քիչ առաջ էլ, պարելու ժամանակ միտս եկաւ ու քիչ էր մնում բարկութիւնից լաց լինեմ, դէմքը թթեցրեց աղջիկը:

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել:

— Այդ անիծեալ շարագրութիւնը, մինչև հիւրերի հաւաքելը չարչարեցի, չարչարեցի՝ բան դուրս չեկաւ, վաղի էլ յոգնած, քնատ կը լինեմ, իսկ միւս օրը պէտք է ներկայացնենք...

— Դեռ չե՞ս գրել:

— Գրել եմ, բայց...

— Էլ ի՞նչ բայց...

— Վախենում եմ որ վատ լինի գրած... կը նայես... հա՛, յանկարծ տոնը փոխելով բացականչեց՝ խնդրում եմ...

— Հիմա...

— Հա՛, խնդրում եմ, նայիր և ասա ինչպէս եմ գրել, ուղղիր, իսկ վաղը երեկոյեան ես կը կարգադրեմ:

— Բայց այստեղ անյարմար է:

Կը գնանք իմ սենեակը, այնտեղ ոչ ոք չկայ:

— Լաւ, լաւ, անգիտակցաբար ասաց նա, խմելով վերջին ումպը:

Նրանք ստի ելան և թեանցուկ դիմեցին դէպի աղջկայ սենեակը:

Այնտեղ իսկապէս ոչ ոք չկար. սենեակում կիսախաւար էր, կամողի վրայ դրած լամպը աղօտ կերպով լուսաւորում էր սենեակը. անկիւնները մըթութեան մէջ էին:

Աղջիկը արագ շարժումներով իրար խառնեց զըրբերը, տետրակները, դահլիճից լաւեց վալսի եղանակը, աղջիկը աւելի նետրդային էր դառնում:

— Ո՛ւր է կորել... ահա վերջացէ:

Նա վերցրեց տետրակը և մօտեցաւ օրիորդին:

— Ահա խնդրում եմ նայեցէք... ես իսկոյն էլի կը գամ, խոստացել եմ Գագիկի հետ պարել... ես իսկոյն էլի կը գամ... Վրայ տեց աղջիկը, արագ յանձնեց տետրակը, իսկ ինքը վազեց վալս պարելու:

Նա մնաց մենակ, մի քանի րոպէ լուռ, տետրակը ձեռքին կանգնած էր սենեակում և աննպատակ, անթարթ, նայում էր տարածութեան մէջ: Մի րոպէ նա մոռացաւ, թէ սրտեղ է գտնուում. նրան թըւաց, թէ ամբողջ աշխարհում մենակ ինքն է կենդանի, որ ամեն ինչ մեռել է, պապանձւել... Կեանքը

այնպէս հեռու թւաց նրան, այնպիսի անխորտակելի պարիսպներով: Նա բաժանւած էր կեանքից:

Կամաց-կամաց նրա լսողութեանը աւելի ու աւելի որոշ սկսեց հասնիլ վալսի նւագը. նրա գր-խում մէկը միւսի ետեից սկսեցին զարթնել յիշողութիւններ, որոնք շարան-շարան գալիս անցնում էին... Նա յիշեց գիմնազիայում անցկացրած տարիները, յիշեց իր ցնորքները, վարդագոյն երազները: Նրան թւաց թէ այնքան էլ վաղուց չէր այդ, որ ընդամենը մի քանի ժամ է անցել և նրա մէջ ցանկութիւն առաջացաւ մի կողմ նետել տետրակը ու Կատիայի պէս վազել, խառնել պարոգներին և պտուել, պտուել մինչև յոգնած, ուժպասպառ կընկնի իր կա-վալէրի թևերի վրայ, ինչպէս առաջ...

Ինչո՞ւ է ինքը իրեն զրկել ամեն մի երջանկու-թիւնից, ինչո՞ւ է թողնում, որ կեանքը խուսափի ի-րենից, ինչո՞ւ պինդ-պինդ չի բռնած նրա փէշերից և չի վազում նրա ետեից, այլ նախապաշարմունքնե-րով ծանրաբեռնւած՝ տեսնում է, որ կեանքն անցնում է և ոչ մի ջանք, ճիգ չի անում վազել նրա ետեից, բռնել օձիքը և խլել իր բաժին երջանկութիւնը:

Յանկարծ նրան թւաց որ ուշացել է. որ արդէն կեանքը անցել է և անհնար է ետ բերել, որ նա իրաւունք էլ չունի իր մասին մտածելու այլևս, որ ինքը ամբողջապէս պատկանում է իր աշակերտուհի-ներին... Բայց միաժամանակ միթէ անհնար է երջան-կութեան մի նշոյլ, մի ճառագայթ...

Նա իրան այնպէս մենակ ու թշուառ զգաց, ա-մենքից թողնւած ու արհամարհւած, ոչ ոքի պիտա-նի... Նա յիշեց մօրը. եթէ կենդանի լինէր, նա իրան

այնպէս մենակ ու թշուառ չէր համարիլ, պինդ-պինդ կը փարւէր և էլ ոչինչ, ոչինչ պէտք չէր նրան:

— Մայրիկ, մայրիկ անգիտակցաբար մի քանի անգամ կը կնեց նա... Մի բան բարձրանում էր դէ-պի կոկորդը, խեղդում էր. շրթունքները դողում էին, աչքերը կարմրել էին ու լցւել արցունքներով: Նա էլի մի քանի վայրկեան կարողացաւ դիմադրել, մատ-ներով սղմում էր աչքերը, որ արգելի, ետ հոսեցնի այդ յամառ արցունքները, բայց այլևս անկարող զս-պելու՝ ընկաւ մահճակալի վրայ և ազատութիւն տւեց արցունքներին:

Մի քիչ անց նա քիչ հանգստացաւ, սրբեց ար-ցունքները, մօտեցաւ հայելուն, ուղղեց մազերը ու նորից նստեց մահճակալի վրայ և սկսեց թերթել տետ-րակը...

Այդ րոպէին դուռը բացւեց և ներս մտաւ մօ-րաքոյրը ու նկատելով նրան՝ զարմացած մնաց տե-ղում:

— Աղջի, էստեղ ի՞նչ ես անում:

— Ոչինչ, մօրաքոյր, Կատեայի շարագրութիւնն եմ նայում:

— Թող, թող. դու էլ էդ յիմարի խելքով ես ընկել, էնտեղ ուրախանում են, պարում են, իսկ դու այստեղ մենակ փակւել ես ու տետրակ ես ուղ-ղում. չե՞ս ձանձրացել այդ տետրակներից:

— Ոչինչ, մօրաքոյր, շատ խնդրեց, չկարողա-ցայ մերժել, բացի այդ՝ այնտեղ ի՞նչ եմ անելու, ես դէ հօ չեմ պարելու...

— Ինչո՞ւ չես պարելու:

— Է՛հ...

— Վէր գցիր, վէր գցիր, գնանք, արգէն պատ-
րաստում են հարսի տունը գնալու:

Աղջիկը նորից զգաց, որ արցունքները խեղդում
են իրան. նա նեարդային արագ շարժումով վեր ցա-
կեց, գրկեց մօրաբլուզը, գլուխը սղմեց նրա կրծքին
և հեկեկաց:



ՀՀ Ազգային գրադարան



NL0350370

«ՆՈՐ ՀՈՍԱՆԻՔԻ» ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1 «ԿԻՆԸ» Լեւոն Շանիր	20 Կ.
№ 2 ՇՐՋՄԱՆԻԿՆԵՐ ՌԷՆ	10 Կ.
№ 5 ՎԱՐԺՈՒՀԻՆ ՄԻԲ. Մանուկեան.	5 Կ.